ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Ամենավաղ՝ դպրոցական շրջանից արտահայտվեցին Մուրադ Հասրաթյանի ընդունակությունները ու ձգտումը գեպի գիտելիքները: Ոսկե մեդալով ավարտելով դպրոցը, նա դարձավ Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետության բաժնի լավագույն ուսանողներից մեկը: Բարեբախտաբար, նրա ուսման տարիները համընկան մեր ճարտարապետության այնպիսի վարպետների մանկավարժական գործունեության հետ, որպիսիք էին Ռաֆայել Իսրայելյանը, Միքայել Մազմանյանը, Սամվել Սաֆարյանը, Վարազդատ Հարությունյանը և այլք, իսկ առաջին աշխատանքային տարիները «Երևաննախագիծ» ինստիտուտում անցան Ալեքսանդր Թամանյանի որդու՝ Գևորգ Թամանյանի ղեկավարության տակ: Բնականաբար, այդպիսի վարպետների հետ աշխատելը, շփվելը և նրանց աշխատանքային մեթոդներին ու ստեղծագործական սկզբունքներին ծանոթանալը չէին կարող հետք չթողնել այնպիսի աշակերտի վրա, որպիսին էր Մ. Հասրաթյանը:



1958 թ. մինչև 1964-ը նա աշխատեց որպես նախագծող ճարտարապետ, և նույնիսկ այդ կարճ ժամանակամիջոցում հասցրեց իրականացնել մի քանի բնակելի և հասարակական շենքերի նախագծեր Երևանում, հեղինակել Լուկաշինի անվ. սովտնտեսության և Քանաքեռ ՀԷԿ-ի բնակելի ավանների գլխավոր հատակագծերի նախագծերը և այլ գործեր: Սակայն Մ. Հասրաթյանին անհաղթահարելիորեն ձգում էր իր ժողովրդի ճարտարապետական ժառանգությունը, գրավում ճարտարապետության պատմության և տեսության խորքերը թափանցելու հնարավորությունը: Անմնացորդ նվիրվելով հետազոտական գործունեությանը, Մ. Հասրաթյանը կարողացավ իր գիտական և ստեղծագործական հնարավորությունները լիովին ի սպաս դնել հայ ճարտարապետության պատմության և տեսության բազմաթիվ հարցերի ուսումնասիրության գործին և գառնալ այս ասպարեզում ճանաչված հեղինակություն: 1964 թ. նա ընդունվեց աշխատանքի Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժին, որի վարիչն է առ այսօր:

Անցնում էին տարիները՝ միջնադարյան արվեստի և ճարտարապետության ուսումնասիրության համար եղան վերելքի և վայրէջքի ժամանակներ: Սակայն Մ. Հասրաթյանը միշտ հավատարիմ մնաց ճարտարապետության շահերին և իր գիտական սկզբունքներին, և այժմ մենք առանց վարանելու կարող ենք ասել, որ նրա գիտնական-հետազոտողի, գիտաժողովների կազմակերպչի և ակտիվ մասնակցի, ինչպես նաև մանկավարժի բազմակողմանի ու բեղմնավոր գործունեությունը դնում է նրան հայ ճարտարապետության ուսումնասիրության այնպիսի երախտավորների կողքը, որպիսիք են Թ. Թորամանյանը, Ն. Տոկարսկին, Ա. Յակոբսոնը, հաջորդ սերդի ներկայացուցիչներ Ա. Սահինյանը, Ս. Մնացականյանը, Հ. Խալպախչյանը, Կ. Հովհաննիսյանը:

Մ. Հասրաթյանի աշխատությունների գիտական արժեքն անվիճելի է ոչ միայն փաստերի ճշտությամբ և հստակությամբ, գիտական մոտեցմամբ և վերլուծության մեթոդով, այլև ներկայացվող նյութի նորությամբ: Նրա բազմաթիվ մենագրություններում, հոդվածներում և զեկուցումներում միշտ նոր տեղեկություններ են զետեղված հայ ճարտարապետության մինչ այժմ չլուսաբանված խնդիրների վերաբերյալ, զարգացման նոր օրինաչափություններ են ի հայտ բերված, ներկայացված են նոր հուշարձաններ: Բազմաթիվ հուշարձաններ գիտական շրջանառության մեջ են դրված Մ. Հասրաթյանի կողմից՝ դասակարգված և ըստ ճարտարապետական տիպերի բաժանված:

Շնորհիվ Մ. Հասրաթյանի չափագրությունների, վերլուծության և նկարագրման՝ մասնագիտական գրականությունում ներկայացված են այնպիսի կարևոր հուշարձաններ, ինչպիսիք են Տաշիրի միանավ եկեղեցիները, Հրազդանի շրջանի Կարենիսիվանքը, Սարակապի, Դդմաշենի եկեղեցիները, Գրիգորիսի գամբարանը Ամարասի վանքում, XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրներ պատմական Սյունիքում: Մ. Հասրաթյանին ենք պարտական Արցախի բազմաթիվ ճարտարապետական հուշարձանների գիտական ուսումնասիրության և դասակարգման համար, որոնց թվում Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, Գանձասար, Ամարաս, Դադիվանք, Խաթրավանք, Գտչավանք վանքային համալիրները: Հայկական ճարտարապետության զարգացման պատմության համար հանգուցային տիպաբանական բազմաթիվ խնդիրներ են դրված և լուծված Մ. Հասրաթյանի կողմից:

Արցախի ճարտարապետական հուշարձանները գրավել էին Մ. Հասրաթյանի ուշադրությունը դեռևս 70-ական թվականներին. «Լրաբեր» ամսագրում նա հրատարակում է հոդված Ամարասի վանքի վերաբերյալ, իսկ հետո, Լիբանանում՝ Գանձասարի և Դադիվանքի ճարտարապետությանը նվիրված հոդված (պատմաբան Բ. Ուլուբաբյանի համահեղինակությամբ), ինչպես նաև հոդված Մոխրենիսի եկեղեցու մասին, որը, հնարավոր է, հանդիսանում է Ավան-Հռիփսիմե տիպի եկեղեցիների նախատիպը: Հետագայում՝ 1981-ին, արդեն Փարիզում, հոդվածներ է հրապարակում Մ. Թիերիի համահեղինակությամբ նույն Գանձասարի և Դադիվանքի մասին, իսկ 1987-ին, փաստորեն, Ղարաբաղյան շարժման նախօրյակին, կարծես կանխագուշակելով բարձրացվող հարցերի կարևորությունը, Միլանում դիրք է լույս ընծայում Գանձասարի մասին: Զափազանց կարևոր նշանակություն

ունի նրա «Арцахская школа армянской архитектуры: факты и фальсификации» («Հայկական ճարտարապետության Արցախյան դպրոցը. փաստեր և կեղծարարություններ») հոդվածը, որը տպագրվեց «Լրաբեր» ամսագրում արդեն 1989-ին և ստացավ համարյա քաղաքական հնչողություն: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցան 1990-ին Մոսկվայում լույս տեսած «Ամարաս» և «Դադիվանք» բրոշյուրները ու բազմաթիվ այլ հրապարակումներն Արցախի ճարտարապետության վերաբերյալ հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն: Այս հրապարակումներն ընդունվում էին հասարակության կողմից արդեն ոչ միայն որպես գիտական, այլև քաղաքացիական խիզախում: Որպես այդպիսին ընկալվեց նաև Ղարաբաղյան պատերազմի ամենաթեժ ժամանակ 1992 թ. լույս տեսած «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» մենագրությունը:

Ընդհանրապես, Մ. Հասրաթյանին հատուկ է ձգտումը դեպի այնպիսի գործունեությունը, որը պահանջում է հեղինակից ոչ միայն գիտական, այլև քաղաքացիական դիրքորոշում: Այդ թվին կարելի է դասել նրա բազմաթիվ հրապարակումները Վրաստանի հայկական հուշարձանների վերաբերյալ: Իսկ Նախիջևան կատարած նրա գիտարշավները կարելի է արդեն ուղղակի անձնուրաց համարել: Այստեղ Մ. Հասրաթյանը չափագրել, վերլուծել և գիտական շրջանառության մեջ է դրել բազմաթիվ հուշարձաններ, որոնց թվում Աստապատի Կարմիր վանքը, որը դրանից ոչ շատ ժամանակ անց քանդվեց Նախիջևանի «տերերի» կողմից և այժմ իր գոյությունը շարունակում է Մ. Հասրաթյանի չափագրություններում ու նկարագրություններում: Նա ուսումնասիրել է նաև Ադուլիսի ճարտարապետական հուշարձանները և վերջին հայ գիտնականն է (գուցե և վերջին հայը), որը եղել է Ջուղայի գերեզմանատանը, ինչի արդյունքում էլ հետագայում Լիբանանում հոդված հրատարակվեց այդ շրջանի ճարտարապետական դպրոցի խաչքարի առանձնահատկությունների մասին:

Մ. Հասրաթյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում միշտ մեծ տեղ են գրավել Հայաստանի ճարտարապետական կապերը Վրաստանի, Բյուզանդիայի, Իրանի և այլ երկրների հետ: Այդ կապերի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն տարբեր երկրների ճարտարապետությունների փոխհարաբերությունների և փոխազդեցությունների, այլև ամեն առանձին երկրի ճարտարապետության ուրույն առանձնահատկությունների ու զարգացման սեփական օրինաչափությունների բացահայտման համար: Մ. Հասրաթյանը համեմատական վերլուծության հիման վրա մասնագիտական բարձր մակարդակով ցույց է տալիս հայկական ճարտարապետության զարգացման ուղու ինքնուրույնությունը, չնայած սերտ կապերին և որոշ ընդհանրություններին այլ երկրների ճարտարապետությունների հետ:

Մ. Հասրաթյանը որպես գիտնական խուսափում է հարթված ճանապարհներից. իր դոկտորական թեզի թեման նա ընտրեց հայկական ճարտարապետության հանրաճանաչություն չվայելող և համարյա չուսումնասիրված շրջանը՝ XV-XIX դդ.: Այստեղ էլ ճարտարապետությունը դիտարկելով որպես այդ ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և պատմական իրավիճակի արտացոլում, Մ. Հասրաթյանը միանգա-

մայն համոզիչ ապացուցում է, որ անկումային համարվող այդ շրջանի ճարտարապետությունը բոլորովին էլ այդպիսին չէ, այլ համապատասխանում է իր ժամանակին, և հանդիսանալով նախորդ դարերի ծաղկման տրամաբանական շարունակությունը՝ իր հերթին նախապատրաստական շրջան է դառնում XX դ. հայկական ճարտարապետության նոր վերելքի համար: Այս եզրահանգումը չափազանց կարևոր է ճարտարապետության զարգացման ժառանգականության ամբողջական պատկերի ստեղծման համար, քանի որ, ինչպես գրում է հեղինակը. «այդ գժվարին շրջանում հայկական ճարտարապետությունը կարողացավ ոչ միայն պահպանել, այլև զարգացնել իր ավանդույթներն ու նվաճումները, կապող օղակ դառնալով իր պատմության միջնադարի և ժամանակակից փուլերի համար»:

Թեև Մ. Հասրաթյանն իր հիմնական գիտական գործունեությունը նվիրել է միջնադարյան ճարտարապետությանը, նրա համար երբեք խորթ չի եղել և Հայաստանի ժամանակակից ճարտարապետությունը: Դեռևս 1968 թ. նա Վ. Հարությունյանի և Ա. Մելիքյանի համահեղինակությամբ Մոսկվայում հրատարակում է «Երևան» մենագրությունը, իսկ հետո՝ նույն համահեղինակների հետ՝ «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» կապիտալ աշխատությունը: Նրա գրչին են պատկանում նաև բազմաթիվ հոդվածներ Երևանի ճարտարապետության խնդիրների և նվաճումների մասին, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Բավական է նայել Մ. Հասրաթյանի թվով հսկայական և տպագրության հարուստ աշխարհագրությամբ հեղինակային աշխատանքների ցուցակին (որոնց թվում հատուկ տեղ են գրավում Հայաստանում Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված և Մոսկվայում 2000 թ. լույս տեսած «Армянская архитектура раннего христианства» և 2001 թ. Երևանում հրատարակված «Հայաստան. Քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» [լուսանկարները՝ Զավեն Սարգսյանի] մեծածավալ գրքերը), որպեսզի պարզ դառնա, որ նա ճանաչված հեղինակություն է ճարտարապետական գիտության ոլորտում՝ հետազոտության իր մեթոդով և թեմաների լայն ընդգրկումով:

Հիրավի, հանրագիտարանական գիտելիքների տեր, խիստ սկզբունքային և ազնիվ, զարմանալի աշխատունակ այս գիտնականը համեստ, զուսպ և շատ բարյացակամ մարդ է: Մենք՝ նրա կրտսեր կոլեգաները, միշտ զգացել ենք իսկական մտավորականի և գիտնականի նրա հատկությունները. անկեղծ ցանկությունը օգնել, բացատրել, հուշել: Նույնպիսի օգնություն նա միշտ ցուցաբերում է հայկական ճարտարապետության օտարազգի ուսումնասիրողներին, պատրաստակամորեն տրամադրելով նրանց անհրաժեշտ նյութեր և ամեն կերպ նպաստելով հայկական ճարտարապետության հանդեպ նրանց մոտ գիտական հետաքրքրության ծավալմանը:

Մուրադ Հասրաթյանի համար աշխատանքը ոչ թե սոսկ գիտական գործունեություն է, այլ ապրելակերպ: Այդ պատճառով էլ նրան հաջողվում է այդպիսի մակարդակով և այդքան գործ անել գիտական, հասարակական, մանկավարժական և հուշարձանների պահպանության ոլորտներում:

Մեզ մնում է ի սրտե շնորհավորել հոբելյարին 70-ամյա տարելիցի առթիվ և ցանկանալ նրան երկար ստեղծագործական կյանք ու հաջողություն իր հայրենանվեր գործունեության մեջ:

ԱՆՈՒՇ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ՊԲՀ-ի խմբագրությունը ճանաչում ու գնահատում է Մուրադ Հասրաթյանի գիտական արդար վաստակը և սիրով միանում նրան հասցեագրված բարեմաղթություններին:

Հանուն խմբագրության՝ ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ